ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2026-3-10-Ա

ք. Երևան 08.04.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի ապրիլի 8-ի նիստում քննարկեց 2025 թվականի հոկտեմբերի 21-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «Գելեհեր Լիմիթիդ» ընկերության (1, Werter Road, SW15 2LL London, United Kingdom, GB) «SOBRANIE LEGACY» (No20242978) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս օգտագործվող «LEGACY» ապրանքային նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://puffzonelb.com/shop/cigarettes-i- -lebanon/legacy/legacy-blue-queen-pack-of-10/?add-to-cart=6113, https://legacytbi.com/ ինտերնետային կայքերում, Honeyrose Product Limited-ի կողմից օգտագործվող «LEGACY» ապրանքային նշանի նկատմամբ, որի որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://www.tobaccoasia.com/product-news/new-herbal-cigarette-launche- -for-middle-east-market/, https://www.amazon.co.uk/Honeyrose-Legacy-Herbal-Mixture-pouch/dp/B096QPNL65 ինտերնետային կայքերում, «LEGACY CIGARS» ապրանքային

նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://legacytobaccoco.com/pt, https://www.amazon.in/ROYAL-SWAG-Nicotine-Individualy-Ingredients/dp/B0DKP1C89R ինտերնետային կայքերում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս օգտագործվող «LEGACY» ապրանքային նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://puffzonelb.com/shop/cigarettes-i-lebanon/legacy/legacy-blue-queen-pack-of-10/?add-to-cart=6113, https://legacytbi.com/ ինտերնետային կայքերում, Honeyrose Product Limited-ի կողմից օգտագործվող «LEGACY» ապրանքային նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://www.tobaccoasia.com/product-news/new-herbal-cigarette-launche-for-middle-east-market/, https://www.amazon.co.uk/Honeyrose-Legacy-Herbal-Mixture-pouch/dp/B096QPNL65 ինտերնետային կայքերում, «LEGACY CIGARS» ապրանքային նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://legacytobaccoco.com/pt, https://www.amazon.in/ROYAL-SWAG-Nicotine-Individualy-Ingredients/dp/B0DKP1C89R ինտերնետային կայքերում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողը ներկա չէր բողոքարկման խորհրդի նիստին:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ

կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «Գելեհեր Լիմիթիդ» ընկերության «SOBRANIE LEGACY» (No20242978) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ